[1] Դուրս գրման ամսաթիվ		
1	Մարտ	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
1	Մարտ	2019 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	1477475868

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Անվանումը	«ԼՈՌՌԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[18] Լրացուցիչ տվյալներ	
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր՝ Համար: Ամսաթիվ:
[20] Մատակարարման (առաքման) եղանակը	
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

Հ	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 36157818բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

01/03/2019 11:27:00

ՈՐՈՇՈՒՄ

Կրկնակի ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

25-ը հունվարի, 2019թ.

քաղ. Դիլիջան

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնի պետի տեղակալ՝ Գ.Ա. Այվազյանս, վերանայելով վարույթիս 36157818 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. հունիսի 3-ին <<Բնապահպանի տուն>> նախաձեռնության անդամների կողմից SOS օգտագործող ֆեյսբուքյան էջում տեղադրված տեսագրության կապակցությամբ, որով ցուցադրվել է բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ <<Հաղարծին>> տեղամաս մասնաճյուղի թիվ 3 պահաբաժնում՝ ուղեփակոցից մոտ 50 մետր հեռավորության վրա հայտնաբերված թվով 2 հատ հաճարենի տեսակի տարբեր տրամագծերի ծառերի հատման փաստը, ոստիկանության Դիլիջանի բաժնում նախապատրաստված նյութերով տվյալներ են ստացվել այն մասին, որ 2018թ. հունիսի 3-ին ՏՄ Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի բնակիչ Գեղամ Արտավազդի Մուկուչյանը կազմակերպել ու իր ընկեր՝ նույն բնակավայրի բնակիչ Գեղամ Հովիկի Սողոմոնյանի հետ բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող <<Դիլիջան>> ազգային պարկ ՊՈԱԿ <<Հաղարծին>> տեղամաս մասնաճյուղի թիվ 3 պահաբաժնի տարածքից ապօրինի հատել է 2 հատ հաճարենի տեսակի թաց կանգուն ծառեր՝ պետությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի՝ 900.000 դրամի նյութական վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի հունիսի 14-ին ոստիկանության Դիլիջանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է 36157818 քրեական գործը, որը վարույթ է ընդունվել Դիլիջանի քննչական բաժնում:

Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի 8-րդ փողոցի 25-րդ տան բնակիչ, 17.06.1980 թվականին ծնված Արմեն Ռաֆիկի Բաբինյանը նյութերի նախապատրաստման ընթացքում տրված բացատրությամբ և կատարված դեպքի վայրի զննություններով մանրամասն հայտնել է հիշատակված ծառերի ապօրինի հատման հանգամանքներն ու հանցանքը կատարած անձանց տվյալները:

2018 թվականի օգոստոսի 06-ին Ա. Բաբինյանը որպես վկա հարցաքննության է ներկայացել փաստաբան Վրեժ Ներկարարյանի հետ, ներկայացրել է հոգեֆիզիկական հիվանդություն ունենալու վերաբերյալ բժշկական փաստաթղթի պատճեն, միաժամանակ դրսևորել է ոչ ադեկվատ վարքագիծ, ուստի նրա հոգեկան վիճակը պարզելու, ըստ այդմ դատավարական, քննչական գործողություններ կատարելու նպատակով հարցաքննությունն ընդհատվել է:

Քրեական գործով անհրաժեշտ է եղել պարզել, թե գործով վկա Արմեն Բաբինյանն ունակ է արդյոք ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները, ուստի 2018 թվականի օգոստոսի 07-ին նշանակվել է ամբուլատոր ֆատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:

2018 թվականի դեկտեմբերի 13-ին ստացվել է դատահոգեբուժական փորձաքննության 382/18 համարի եզրակացությունը, որի համաձայն՝ հանձնաժողովը եզրակացրել է, թե Արմեն Բաբինյանը տառապում է "Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, արտահայտված դեբիլություն՝ բարդացած ալկոհոլի չարաշահումով" ախտորոշմամբ սակավամտությամբ, որն արտահայտված է այն աստիճան, որ զրկում է Արմեն Բաբինյանին քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակություններից: Մտավոր հետամնացությամբ Ա. Բաբինյանը տառապում է մանկուց:

Նկատի ունենալով, որ նյութերի նախապատրաստման ընթացքում կատարված դեպքի վայրի զննության արձանագրության համաձայն՝ Արմեն Բաբինյանն անձամբ է զննության մասնակիցներին ուղեկցել ապօրինի հատված ծառերի կոճղերի մոտ, ապա նաև փայտանյութի տեղափոխման վայր, որտեղից էլ վերցվել է փայտի կտոր, որը համաձայն դատաբուսաբանական փորձաքննության եզրակացության՝ հանդիսացել է ապօրինի հատված ծառերից մեկի մասնիկը, բացի այդ, նա տվել է դեպքի վերաբերյալ մանրամասն բացատրություն, որպիսի պայմաններում դատահոգեբուժական

փորձաքննության 382/18 եզրակացությունը կասկած է հարուցում, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ, 243-246-րդ և 248-րդ, 251-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Վարույթիս 36157818 քրեական գործով նշանակել կրկնակի ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ''Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր'' ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշման պատճենը, փորձաքննության անցկացմանը կներկայացվի գործով վկա Արմեն Բաբինյանը և կտրամադրվի քրեական գործի նյութերը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա.Արմեն Բաբինյանը բացատրություն տալու, դեպքի վայրի զննությանը մասնակցելու պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է թե՞ ոչ, եթե՞ այո, ապա ինչպիսի հիվանդությամբ և երբվանից:

բ. Արմեն Բաբինյանը ունակ է արդյոք ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

գ. Նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդները գիտականորեն հիմնավորված են, թե ոչ, եթե ոչ, ապա ինչու:

4.Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին և խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշմամբ, սակայն քրեական գործի համար կարող են ունենալ էական նշանակություն:

Պետի տեղակալ՝ Գ.Ա. Այվազյան